ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1950 Общественные науки

Գ. Մահակյան

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՍՍՌՄ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՂԱԴՐԱՆ ՄԱՍԻՆ

Լենինը և Ստալինը ստեղծեցին սոցիալիզմի քաղաքատնտեսությունն ու մշակեցին սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման հոյակապ պլանը։ Սոցիալիզմի քաղաքատնտեսության բաղկացուցիչ մասն է կազմում արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման լենինյան-ստալինյան ուսմունքը։ Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման թեորիան բխում է մի երկրում սոցիալիզմը կառուցելու լենինյան ուսմունքից։ Լենինը դեռևս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից առաջ հիմնավորեց Ռուսաստանի տնտեսական, տեխնիկական հետամնացության հաղթահարման անհրաժեշտությունը։

Ընկեր Ստալինը, Լենինի մեծ գործի շարունակողը, սոցիալիզմի կառուցման հանճարեղ վարպետը, էլ ավելի զարգացրեց, կոնկրետացրեց արտադրողական ուժերի լենինյան սկզբունքներն ու մեթոդները։ Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման ստալինյան թեորիան ոչ միայն գծագրում է սոցիալիզմի նյութական բազայի ստեղծման կոնկրետ պլանը, այլև բացահայտում է արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման առավելությունները կապիտալիզմի համեմատությամբ։ [1]

Մարքսը և Էնգելսը՝ դեռևս մինչ մոնոպոլիստական կապիտալիզմի ստադիան, ընդգծել ու բացահայտել են կապիտալիզմի պայմաններում արտադրողական ուժերի տեղադրման անռացիոնալ, գիշատիչ բնույթը։

«Կապիտալիստական արտադրությունն ընդհանրապես, իր բոլոր գծուծությունները հանդերձ, միանգամայն վատնողաբար է վարվում մարդկային մատերիալի հետ ճիշտ այնպես, ինչպես որ մյուս կողմից՝ իր արդյունքներն առևտրի միջոցով ու մրցման իր մեթոդով բաշխելու շնորհիվ շատ վատնողաբար է վարվում նյութական միջոցների հետ, և մի կողմում հասարակությունը կորցնում է այն, ինչ որ մյուս կողմում շահում են առանձին կապիտալիստները։»

Մարքսի այս խորիմաստ բացատրությունը մերկացնում է կապիտալիստական արտադրական եղանակի սահմանափակ լինելը և նրա շահագործողական գիշատիչ բնույթը։ Արտադրողական ուժերի անհամաչափ և անռացիոնալ տեղադրումը կապիտալիզմի պայմաններում արտահայտվում է նաև մի բուռն իմպերիալիստական գիշատիչների և գաղութային ու կիսագաղութային ժողովուրդների միջև եղած անտագոնիստական, անհաշտելի խոր հակամարտություններով։

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, II մաս, էջ 66։

Արտադրողական ուժերի անռացիոնալ տեղադրման մյուս արտահայտություններ հանդես է գալիս իմպերիալիզմի ստադիայում՝ կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքի մեջ։

Արտադրողական ուժերի անռացիոնալ տեղադրման ցայտուն օրինակ է հանդիսանում ցարական Ռուսաստանը։ Մինչև ռևոլուցիան ցարական Ռուսաստանի խոշոր արդյունաբերության 2/3-ը տեղադրված էր կենտրոնական ռայոնների խոշոր քաղաքներում և Դոնբասում, իսկ Սիբիրում, Ղազախստանում և Միջին Ասիայում տեղադրված էր արդյունաբերության միայն 6,1 տոկոսը։ Ռուսաստանի թեթև արդյունաբերության գլխավոր ճյուղերը՝ բամբակեղենի վերամշակման արտադրության 99,04 տոկոսը, բրդեղենի վերամշակման արտադրության 83,2 տոկոսը, մետաքսի վերամշակման արտադրության 100 տոկոսը տեղադրված էին կենտրոնական և հյուսիս-արևմտյան ռայոններում, մինչդեռ հումքի գլխավոր բազաները գտնվում էին Միջին Ասիայում և Անդրկովկասում։

Արտադրողական ուժերի այս անռացիոնալ տեղադրման պատճառներից մեկը հանդիսացավ ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը, որ արգելակում էր ծայրագավառների տնտեսական զարգացմանը։

Ռուսաստանի արտադրողական ուժերի անռացիոնալ տեղադրումն ավելի էր ուժեղանում արտասահմանյան կապիտալի առկայությամբ, որը ռուսական էկոնոմիկայի կարևորագույն ճյուղերում զգալի դեր էր խաղում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան Ռուսաստանի արտադրողական ուժերի զարգացումն ազատագրեց կապիտալիզմի այդ սեղմող, արգելակող օղակից և ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակով ապահովեց նրանց անխափան, անընդհատ զարգացումը՝ մինչև հիմա պատմության մեջ չտեսնված արագ տեմպերով։ Սոցիալիզմը հանդիսանում է արտադրական հարաբերությունների նոր տիպ, որ սկզբունքորեն տարբերվում է կապիտալիզմից, այդ պատճառով արտադրողական ուժերի տեղադրման օրենքները սկզբունքորեն, արմատապես փոխվում են սոցիալիզմի օրով։

Լենինը դեռ 1918 թ. գրած «Գիտատեխնիկական աշխատանքի պլանի ուրվագծեր» հոդվածում նախագծում էր արտադրողական ուժերի տեղադրման սոցիալիստական սկզբունքներն ու մեթոդները։

Լենինը սովորեցնում էր, որ տնտեսության սոցիալիստական սիստեմի պայմաններում արտադրողական ուժերի տեղադրումը պետք է այնպես կազմակերպվի, որպեսզի մաքսիմալ չափով տնտեսվեն աշխատանքը և նյութական միջոցները։ Այլ կերպ ասած՝ Լենինը պահանջում էր արտադրողական ուժերի ռացիոնալ տեղադրմամբ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, տնտեսել արտադրամիջոցները, վերացնել կապիտալիզմից ժառանգություն մնացած արտադրողական ուժերի անռացիոնալ տեղադրումը, բացահայտել նրա գիշատիչ շահագործական բնույթը։

Այնուհետև Լենինն ընդգծում էր, որ արտադրողական ուժերի տեղադրումը պիտի կատարվի այնպես, որպեսզի ապահովի մեր երկրի տնտեսական անկախությունը, երկրի պաշտպանությունը և սոցիալիզմի հաղթանակը։

Ժողովրդական տնտեսության բոլոր ռեսուրսները,— ասում էր Լենինը,— պետք է առավելագույն չափերով օգտագործել, կրճատելով հեռավոր ու հանդիպական բեռնափոխադրումները, օգտագործելով տեղական հումքի բոլոր աղբյուրները։

Արտադրողական ուժերի տեղադրման հիմքում Լենինը դնում էր առաջավոր տեխնիկայի օգտագործման անհրաժեշտությունը, նա այդ մասին գրում էր՝

«Հատուկ ուշադրություն դարձնել արդյունաբերության և տրանսպորտի, էլեկտրիֆիկացիայի վրա և կիրառել էլեկտրականությունը գյուղատնտեսության մեջ»։[1]

Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման մեծագույն ծրագիր հանդիսացավ Լենինի կողմից մշակված ГОЭЛРО-ի ծրագիրը։

Ընկեր Ստալինը, հենվելով արտադրողական ուժերի տեղադրման լենինյան սկզբունքների վրա, մշակեց արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման մի ամբողջացած թեորիա։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ սոցիալիզմը ընդունակ է և ի վիճակի է վերացնելու արտադրողական ուժերի կապիտալիստական տեղադրման անռացիոնալականությունը, անհամաչափությունը և նրանց գիշատիչ բնույթը։

Ընկեր Ստալինը մշակեց երկրի տնտեսական հետամնացության հաղթահարման հոյակապ հնգամյա պլանները, որոնք արմատական կերպով վերափոխեցին մեր երկրի պատկերը։ ՍՍՌՄ-ը ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ երկրի։ Գյուղատնտեսությունը դարձավ սոցիալիստական ինդուստրիայի ճյուղերից մեկը։

Ստալինյան հնգամյակների պլանների մեջ կարևոր տեղ է բռնում արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման թեորիան։

Մարքսի, Էնգելսի, Լենինի դիրքավորումներն արտադրողական ուժերի տեղադրման մասին, ընկեր Ստալինը հարստացրեց սոցիալիզմի կառուցման անմիջական փորձով և իրագործեց նրանք ՍՍՌՄ-ում։

Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան ուսմունքի հիմքում դրված են հետևյալ սկզբունքները.

1. Արտադրողական ուժերի տեղադրումը պիտի կատարվի տնտեսվար կերպով՝ մաքսիմալ չափերով օգտագործելով երկրի բնական ռեսուրսները, նյութական միջոցները և բանվորական ուժը։

2. Արտադրողական ուժերի տեղադրումը կատարվում է երկրի ինդուստրացման նշանաբանի տակ, ապահովելով ծանր արդյունաբերության ճյուղերի առաջատարությունը և նրանց արագ զարգացումը։

3. Արտադրողական ուժերի ճիշտ և ռացիոնալ տեղադրմամբ ապահովվում է մեր երկրի տնտեսական անկախությունը։

4. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրումը երկրի պաշտպանության ապահովումն ու նրա ուժեղացումն է նշանակում։

5. Արտադրողական ուժերի տեղադրումը ՍՍՌՄ-ում ենթադրում է հին արդյունաբերական ռայոնների այնպիսի զարգացում, որոնք պիտի օգնեն ամբողջ երկրի ինդուստրացման գործին։

6. Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան թեորիան հիմնավորում է երկրի բոլոր ռայոնների էկոնոմիկայի կոմպլեքս զարգացման անհրաժեշտությունը։

7. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրմամբ կենսագործվում է մեր պարտիայի ազգային քաղաքականությունը։

---

[1] В. И Ленин. Соч., т. XXII, стр. 434.

8. Արտադրողական ուժերի տեղադրումը սոցիալիզմի պայմաններում ապահովում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համաչափ զարգացումը։

9. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրումն ապահովում է, ընդլայնված վերարտադրության արագ տեմպեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

10. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրումը կարևոր պրոբլեմներից մեկն է հանդիսանում հումքի աղբյուրները արտադրության մոտեցնելու հարցը։

11. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրումն ապահովում է սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումը մեր երկրում։

Սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում՝ ընկեր Ստալինի ուսմունքն՝ արտադրողական ուժերի տեղադրման մասին, հանդիսացել է ժողովրդական տնտեսության զարգացման ծրագիրը։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ բավական չէ որոշել երկրի տնտեսության զարգացման ուղղությունը, նրա բնույթը, անհրաժեշտ է նաև ճշտորեն պլանավորել արդյունաբերության, գյուղատնտեսության, ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի տեղադրումը։ Ժողովրդական տնտեսության բազմաթիվ ճյուղերի ճիշտ և՝ ռացիոնալ տեղադրումից է կախված երկրի ինդուստրացման բախտը։ Այնպիսի մի խոշորագույն երկիր, ինչպիսին է ՍՍՌՄ-ը, չի կարող բավականանալ ինդուստրացման հին կենտրոններով։

Անհրաժեշտ է ստեղծել արդյունաբերական նոր օջախներ, օգտագործելով ՍՍՌՄ-ի անսպառ հանքային հարստությունները, ինդուստրացման ենթարկել Սովետական Միության բոլոր ռայոնները, կազմակերպելով սիստեմատիկ օգնություն ազգային ռեսպուբլիկաների էկոնոմիկայի սոցիալիստական վերակառուցման գործին,— սովորեցնում է ընկեր Ստալինը։

Մանր ինդուստրիայի տեղադրումն իր հերթին առաջացնում է համապատասխան փոփոխություններ նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի մեջ։

Ընկեր Ստալինը ընդգծում է ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի ճիշտ տեղադրման անհրաժեշտությունը։ Այսպես, օրինակ՝ նոր ինդուստրացվող ռայոնները պիտի ունենան համապատասխան էներգետիկ բազա, հումքի աղբյուրներ, գյուղատնտեսության զարգացման բարձր աստիճան, հաղորդակցության միջոցների արագ զարգացում և այլն։ Այս բոլոր ճյուղերի զարգացումը այնպիսի ուղղությամբ պետք է տարվի, որ մաքսիմալ չափերով զարգանան տեղական արդյունաբերության, գյուղատնտեսության բոլոր ճյուղերը, կրճատվեն հեռավոր բեռնափոխադրումները։

Այնուհետև ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ սոցիալիստական տնտեսությունը պիտի հաղթահարի առանձին ռայոնների միջև եղած նեղ մասնագիտացումը, վերացնի, այսպես կոչված, սպառող և արտադրող ռայոնների տարբերությունը։

Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան հանճարեղ պլանների իրագործման խոշոր ապացույցն է, հանդիսանում ՍՍՌՄ-ի լայնածավալ Արևելքի ինդուստրացումը։ Ուրալը, Արևմտյան Սիբիրը, Ղազախստանը, Միջին Ասիայի ռեսպուբլիկաները, Անդրկովկասի ռեսպուբլիկաները և Հեռավոր

Արևելքն այսօր դարձել են ինդուստրացված ռայոններ, որտեղ ստեղծված են ժամանակակից ինդուստրիայի բոլոր ճյուղերը։

Մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիան Արևմտյան Սիբիրի հարուստ ածխահանքերը համարյա թե չէին օգտագործվում։ Այժմ Կուզբասը ածխի արտադրությամբ ՍՍՌՄ-ում 2-րդ տեղն է բռնում։ Հայրենական պատերազմից առաջ Կուզբասում արտադրվում էր 20 անգամ ավելի քարածուխ, քան մինչև Հոկտեմբերյան ռևոլուցիան, իսկ 1946 թ. Կուզբասը տվեց 28 միլ. տոննա ավելի քարածուխ, քան մինչև. ռևոլուցիոն Ռուսաստանի ամբողջ բարաձիայինարդյունաբերությունը։

Կուզբասի ընկեր Ստալինի անվան մետալուրգիական կոմբինատը 1946 թվին 2—3 անգամ ավելի արտադրանք է տվել, քան մինչ ռևոլուցիոն Ուրալի մետաղարդյունաբերությունը։

Արևմտյան Սիբիրը հանդիսանում է ՍՍՌՄ-ի հացահատիկային բազաներից մեկը։ Հատկապես խոշոր է Արևմտյան Սիբիրի դերը անասնապահության ասպարեզում, որը յուղի արտադրությամբ ՍՍՌՄ-ում բռնում է առաջին տեղը։

Արևմտյան Սիրիրում գործում են ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքով զինված 300-ից ավելի յուղի մշակման գործարաններ։

Արևմտյան Սիբիրն ունի իր սեփական տեքստիլ արդյունաբերությունը՝ հանձին Բառնաուլի տեքստիլ արդյունաբերության կոմբինատի։ Արևմտյան Սիբիրը Միջին Ասիայի ռեսպուբլիկաներին հաց է տալիս և դրա փոխարեն ստանում է բամբակ՝ իր տեքստիլ արդյունաբերության համար։

Ուրալի և Արևմտյան Սիբիրի ինդուստրացմամբ այդ ռայոնների տնտեսական կյանքում տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական խոշոր վերափոխումներ, որոնք արմատական կերպով փոխել են տնտեսության զարգացման ուղղությունը։ ՍՍՌՄ-ի այդ երբեմնի հետամնաց ռայոնները դարձել են սոցիալիստական ինդուստրիայի և սոցիալիստական գյուղատնտեսության առաջնակարգ ռայոններ։

Նույն պատկերն է նաև ՍՍՌՄ-ի արևելյան մյուս ռայոններում։

ՍՍՌՄ-ի ինդուստրացումը ենթադրում է ամբողջ երկրի տնտեսական ռայոնների էկոնոմիկայի բնույթի արմատական փոփոխություն, այդ պատճառով ՍՍՌՄ-ի արդյունաբերական խոշոր կենտրոններն իրենց պարենային կարիքները պիտի հոգան տեղական ռեսուրսների հաշվին։ Այդ պրոբլեմի լուծումը ժողովրդական տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունի և կրճատում է ավելորդ արտադրողական ծախսերը, նպաստում տվյալ մարզի արտադրողական ուժերի զարգացմանը։

Երկրի ինդուստրացման խոշոր լծակն է հանդիսանում հին արդյունաբերական ռայոնների զարգացումը, բայց ընկեր Ստալինը պահանջում էր, որ հին տնտեսական ռայոնների արդյունաբերության զարգացման բնույթը արմատապես պետք է փոխվի՝ թեթև ինդուստրիայի փոխարեն այդ ռայոնների էկոնոմիկայի մեջ վճռական տեղ պետք է բռնեն ծանր ինդուստրիայի ճյուղերը։

Ընկեր Ստալինը հատկապես պարտիայի 16-րդ համագումարում հատուկ ուշադրություն դարձրեց արտադրողական ուժերի տեղադրման, մասնավորապես արդյունաբերության ճիշտ տեղադրման պրոբլեմների վրա։ Մեր ժողովրդական տնտեսության զարգացման, երկրի ինդուստրացման և նրա պաշտ-

պանունակության ուժեղացման գործում վճռական և կարևոր նշանակություն ունեցավ Ուրալ—Կուզբասի կոմբինատի ստեղծումը, որի կառուցման անհրաժեշտությունը հիմնավորեց ընկեր Ստալինը պարտիայի 16-րդ համագումարում:

Ուրալի և Արևմտյան Սիբիրի անսպառ հանքային հարստությունների օգտագործումը, ՍՍՌՄ արևելյան մարզերի սոցիալիստական ինդուստրացումը, երկրի պաշտպանության ամրապնդումը, արտադրողական ուժերի ռացիոնալ տեղադրումը, այս բոլոր հանգուցային պրոբլեմների լուծումն իրենց արտահայտությունը գտան Ուրալ—Կուզբասի ստալինյան հոյակապ պլանի լուծման մեջ:

«Մենք ինչպես էլ որ զարգացնելու լինենք ժողովրդական տնտեսությունը, չի կարելի կառավարվել առանց այն հարցի, թե ինչպես ճիշտ տեղադրել արդյունաբերությունը, որպես ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղ։ Այժմ բանն այնպես է, որ մեր արդյունաբերությունը, ինչպես և մեր ժողովրդական տնտեսությունը, հիմնականում հենվում է Ուկրաինայի ածխամետալուրգիական բազայի վրա։ Հասկանալի է, որ առանց այսպիսի բազայի աներևակայելի է երկրի ինդուստրացումը։ Եվ ահա մեզանում մի այսպիսի բազա է հանդիսանում ուկրաինական վառելիքաս-մետալուրգիական բազան։

Բայց միայն այդ բազան կարո՞ղ է արդյոք հետագայում բավարարել ՍՍՌՄ և հարավին, և կենտրոնական մասին և Հեռավոր Արևելքին, և Թուրքեստանին։ Բոլոր տվյալները մեզ ասում են, որ չի կարող։ Մեր ժողովրդական տնտեսության զարգացման մեջ նորը ի միջի այլոց այն է, որ այդ բազան արդեն անբավարար է դարձել մեզ համար։ Նորն այն է, որ հետագայում էլ ամեն կերպ զարգացնելով այդ բազան, միաժամանակ սկսենք անհապաղ ստեղծել երկրորդ ածխա-մետալուրգիական բազան։ Այդ բազան պետք է լինի Ուրալո-Կուզնեցկի կոմբինատը, Կուզնեցկի կոքսայող ածխի միացումը Ուրալյան հանքանյութի հետ»։[1]

Ընկեր Ստալինն այս հատվածի մեջ շարադրում է ՍՍՌՄ-ի արտադրողական ուժերի տեղադրման հիմնական սկզբունքները, արդյունաբերության ճիշտ տեղադրումը, հին արդյունաբերական շրջանների զարդացումը, նոր արդյունաբերական ռայոնների առաջացումը և ՍՍՌՄ-ի բոլոր տնտեսական շրջանների համատարած ինդուստրացման հնարավորությունների ստեղծումը։

Ընկեր Ստալինի այդ իմաստուն ծրագիրն այսօր կատարված է։ Ուրալ—Կուզբասի կոմբինատը հանդիսանում է մեր ժողովրդի փառքն ու պարծանքը։

Ընկեր Ստալինը 16-րդ համագումարում լուծեց նաև գյուղատնտեսության տեղադրման պրոբլեմները։ Կապիտալիզմի պայմաններում թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության տեղադրումը կատարվում է տարերային կարգով։ Լենինն իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հռչակավոր աշխատության մեջ ցույց է տալիս այդ տարերային պրոցեսի առկայությունը Ռուսաստանի գյուղատնտեսության մեջ։

«Այսպիսով տեղի է ունենում հացահատիկի արտադրության գլխավոր կենտրոնի տեղափոխություն. 1860-ական և 1870-ական թվականներին միջին սևահողային նահանգներն ամենից առաջ էին, իսկ 1880-ական թվականներին նրանք առաջնությունը զիջեցին տափաստանային և Ստորին Վոլգայի նա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 364—365։

հանգներին. հացահատիկների արտադրությունը նրանցում սկսեց նվազել»:[1]

Այս տարերային պրոցեսը սոցիալիզմը հաղթահարում է։ Գյուղատնտեսության զարգացումը, ինչպես ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերինը, սոցիալիզմի պայմաններում կատարվում է պլանաչափ կարգով։

ՍՍՌՄ էկոնոմիկայի գլխավոր շարժիչ ուժը հանդիսանում է սովետական պետությունը, որ պլանավորման միջոցով ուղղություն է տալիս ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը, ելնելով պարտիայի կողմից առաջադրվող քաղաքական և տնտեսական դիրեկտիվներից։

Գյուղատնտեսության արտադրողական ուժերի ճիշտ տեղադրման հիմքն է հանդիսանում նրա սոցիալիստական վերակառուցումը և դրա հիման վրա հացահատիկային պրոբլեմի լուծումը։

Միայն այս պրոբլեմների լուծմամբ,— ընդգծում էր ընկեր Ստալինը 16-րդ համագումարում,— կարելի է լուծել նաև գյուղատնտեսության մյուս պրոբլեմները և մասնավորապես նրա մասնագիտացման հարցերը։ Ընկեր Ստալինը խորհուրդ է տվել, որ առանց հացահատիկային պրոբլեմի լուծման, չի կարելի առաջ շարժել ոչ անասնապահությունը, ոչ տեխնիկական կուլտուրաների զարգացումը։

«Այժմ, երբ մենք անցել ենք խոշոր տնտեսության և պետության ձեռքում ապահովել հացահատիկի ռեզերվներ, մենք կարող ենք և պետք է մեր առաջ խնդիր դնենք ճշտորեն կազմակերպելու մասնագիտացման գործն ըստ կուլտուրաների ու ճյուղերի»։[2]

Ընկեր Ստալինի կողմից պարտիայի 16-րդ համագումարում առաջադրած պրոբլեմները՝ արտադրողական ուժերի տեղադրման մասին, կենսագործվեցին առաջին հնգամյակում։

Համագումարից երեք տարի հետո ընկեր Ստալինը առաջին հնգամյակի հանրագումարների մասին տված իր պատմական զեկուցման մեջ ասաց. «Մենք ունեինք միայն մեկ միակ ածխա-մետաղագործական բազա— Ուկրաինայում, մի բազա, որ դժվարությամբ էինք կառավարում։ Մենք հասանք այն բանին, որ ոչ միայն բարձրացրինք այդ բազան, այլև ստեղծեցինք մի նոր ածխա-մետաղագործական բազա— Արևելքում, որ մեր երկրի հպարտությունն է կազմում»։[3]

Ուրալո-Կուզնեցկի կոմբինատի կառուցմամբ սովետական կառավարությունը ոչ միայն օգտագործում է Ուրալի և Արևմտյան Սիբիրի անսպառ հանքային հարստությունները, այլև փոխում է Ուրալի և Արևմտյան Սիբիրի պատկերը։

Ուրալո-Կուզնեցկի կոմբինատի արտադրական կարողության մասին գաղափար կազմելու համար բավական է հիշատակել, որ այդ կոմբինատը Մակեևկայի մետաղագործարանի հետ միասին 1936 թ. արտադրել է ավելի շատ չուգուն, քան ամբողջ ցարական Ռուսաստանի սև մետաղարդյունաբերությունը։

Ուրալո-Կուզնեցկի կոմբինատի ստեղծման ստալինյան պլանը միայն մի մասն է այն հսկայական տեղաշարժերի, որ կատարվեց մեր երկրում ստալի-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 314։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 366։
[3] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, 11-րդ հր., էջ 437։

նյան արտադրողական ուժերի տեղադրման հանճարեղ պլանների իրագործման հետևանքով։

Դեռևս առաջին հնգամյակի հանրագումարներն ամփոփելով, ընկեր Ստալինը թվում էր մեր երկրի համար վճռական նշանակություն ունեցող արտադրության մի շարք ճյուղեր, որոնք ստեղծվել էին այդ հնգամյակի ընթացքում։

Այդ ճյուղերն էին՝ սև մետաղարդյունաբերությունը, տրակտորների արտադրությունը, հաստոցաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, դյուղատնտեսական մեքենաշինությունը, ավիացիոն արդյունաբերությունը և այլն։

Առաջին հնգամյակի ընթացքում կառուցվել են հազարից ավելի նոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Բազմաթիվ ձեռնարկություններ արմատապես վերակառուցվել են։ Արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման և նրանց կոնկրետ տեղադրման պլանը ևս մշակել է ընկեր Ստալինը։

Ընկեր Ստալինի զինակիցներից մեկը՝ Վ. Վ. Կույբիշևը հետևյալն է գրել այդ մասին.

«Մետալուրգիական գործարանների ծրագիրը նախագծել է ընկեր Ստալինը։ Տրանսպորտային մեքենաշինությունը, նույնպես վերանորոգող արհեստանոցների, վագոնային գործարանների ծրագիրն է առաջ քաշել ընկեր Ստալինը։ Բառացիորեն ընկեր Ստալինի ձեռքով է գրված թե ավտոմոբիլային ինչպիսի գործարաններ, որտեղ պիտի կառուցվեն և ինչպիսի կարողությամբ։ Ծովային նավաշինության գործարանների կառուցման ծրագիրը նրշված է ընկեր Ստալինի կողմից, սինթետիկ կաուչուկի գործարանների ծրագիրը թելադրվել է ընկեր Ստալինի կամքով և համաձայնությամբ»։[1]

Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ՍՍՌՄ-ի արդյունաբերական հին ռայոնների արտադրության բնույթը արմատապես վերափոխվել է։

Լենինգրադը, Մոսկվան, Գորկին, Իվանովան և մի շարք այլ խոշոր արտադրական հին ռայոններ այսօր վեր են ածվել ծանր ինդուստրիայի խոշոր կենտրոնների և հաջողությամբ իրագործում են ՍՍՌՄ-ի մյուս տնտեսական ռայոնների ինդուստրացմանն օգնելու իրենց պատվավոր գործը։ Այդ բոլոր ռայոններում ստալինյան հնգամյակների ընթացքում է ստեղծվել ժամանակակից ինդուստրիայի բազմաթիվ ճյուղեր՝ մեքենաշինություն, մետաղագործություն, քիմիական արդյունաբերություն, հաստոցաշինություն և այլ ճյուղեր։ Այդ տեղաշարժերի մասին գաղափար կազմելու համար բավական է բերել մեր Միության մայրաքաղաք Մոսկվայի օրինակը։ Ստալինյան հնգամյակների ընթացքում Մոսկվայում կառուցվեցին ծանր ինդուստրիայի այնպիսի գիգանտներ, ինչպիսիք են՝ ընկեր Ստալինի անվան ավտոգործարանը, բարձր որակի պողպատ արտադրող «Սերպ և մոլոտ» գործարանը, ընկ. Կագանովիչի անվան առանցքակալների գործարանը, Կույբիշևի անվան էլեկտրոգործարանը և մի շարք այլ գործարաններ։ Մոսէներգիայի սիստեմում մշակվող էլեկտրական էներգիան 1947 թ. 3,5 անգամ գերազանցում էր 1910 թ. Ռուսաստանի բոլոր էլեկտրակայանների արտադրանքին։ 1913 թվի համեմատությամբ մետաղագործությունը Մոսկվայում աճել է 96 անգամ։ Այդպես է պատկերը նաև մյուս արդյունաբերական հին ռայոններում։

---

[1] В. В. Куйбышев, Статьи и речи, т. V, 1937 г., стр. 470.

Պարտիայի 17-րդ համագումարում ևս ընկեր Ստալինը մեծ ուշադրություն դարձրեց գյուղատնտեսության արտադրողական ուժերի տեղադրման մի շարք պրոբլեմների վրա։ Այդ պրոբլեմներից են՝ սովխոզների նեղ մասնագիտացման վերացումը, հայցահատիկային կուլտուրաների տարածումը սևահողային շրջաններից դուրս, խոշոր քաղաքներին կից սեփական հումքային պարենային բազաների ստեղծումը և այլն։ Այս բոլոր պրոբլեմները ընկեր Ստալինն առաջադրեց 17-րդ համագումարում և ցույց տվեց նրանց լուծման ուղիները։

Պարտիան և կառավարությունը, ղեկավարվելով ընկեր Ստալինի այդ ցուցումներով, ստալինյան հնգամյակների ընթացքում, հսկայական հաջողություններ ձեռք բերին՝ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի ճիշտ տեղադրման գործում։

Հատկապես հաջողությամբ է լուծվել ընկեր Ստալինի առաջադրանքը՝ հացահատիկային կուլտուրաների տարածման մասին։

Այսպես, եթե 1913 թ. ոչ սևահողային 22 մարզերում աշնանացան ցորենի ցանքը հավասար էր 63 հազար հեկտարի, գարնանացանը՝ 257 հազարի, ապա 1938 թ. աշնանացան ցորենի ցանքն աճեց 17 անգամ, իսկ գարնանացանը՝ 6 անգամ։

Հանրահայտ է, որ ընկեր Ստալինի նախաձեռնությամբ լուծվեցին մեր ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք տեխնիկական կուլտուրաների արմատավորման, զարգացման և նրանց տեղադրման պրոբլեմները, ինչպիսիք են՝ թեյի, բնական կաուչուկի, բամբակի, ծխախոտի, յուղատու կուլտուրաների, շաքարի ճակնդեղի և այլն։

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացումը սերտ կերպով կապված է տրանսպորտի զարգացման և նրա ճիշտ տեղադրման հետ։

Տրանսպորտի բոլոր տեսակներից ՍՍՌՄ-ում վճռական նշանակություն ունի երկաթուղային տրանսպորտը։

Երկաթուղային տրանսպորտի կարողության ուժեղացումն ու ճիշտ տեղադրումը հիմնականում պայմանավորում է տվյալ տնտեսական ռայոնի զարգացման թափը և ապահովում ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի ու ռայոնների միջև եղած տնտեսական կապերը։

Տրանսպորտի ճիշտ տեղադրումից և զարգացումից է կախված փոխադրումների ռացիոնալ կազմակերպումը, որ ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող խոշոր պրոբլեմ է։

ՍՍՌՄ-ում գոյություն ունի աշխատանքի հասարակական բաժանում, որը պայմանավորվում է տարբեր տնտեսական ռայոնների պատմական անցյալով, նրանց բնական հարստություններով և այդ ռայոններին առաջադրվող տնտեսական և քաղաքական խնդիրներով։ Այստեղից էլ բխում է տրանսպորտի անհրաժեշտությունը և տնտեսական կարևորությունը ժողովրդական տնտեսության զարգացման համար։

Երկաթուղային տրանսպորտի կարևորությունն ավելի առավել նշանակություն է ձեռք բերում ՍՍՌՄ-ի տերիտորիայի հսկայական մեծությամբ և նրա կոնտինենտալ բնույթով։ Ընկեր Ստալինը ասում է, որ մեր պետության

---

[1] И. А. Бенедиктов. Развитие сельского хозяйства в новой пятилетке, изд. 1946 г., стр. 6.

գոյությունն ու զարգացումը,— որ իր տերիտորիայի չափերով գերազանցում է աշխարհի յուրաքանչյուր պետության, այդ թվում Անգլիային նրա գաղութներով (առանց դոմինիոնների), անիմաստ կլինի առանց կարգավորված երկաթուղային տրանսպորտի, որ միացնում է մեկ պետական միավորման մեջ մեր երկրի խոշոր մարզերը։

Այսպիսով, ընկեր Ստալինը խոշոր նշանակություն է տալիս երկաթուղային տրանսպորտին, այդ պատճառով ամենամեծ ուշադրություն է դարձրել ՍՍՌՄ-ի երկաթուղային տրանսպորտի ընդարձակման և տեղադրման հարցերի վրա։

Մինչև ռևոլուցիան երկաթուղային տրանսպորտի գլխավոր ցանցը և հանգույցները տեղավորված էին ցարական Ռուսաստանի եվրոպական մասում։

Կապիտալիզմի պայմաններում տրանսպորտի տեղադրումը, զարգացումը ենթարկվում է շահույթի, կոնկուրենցիայի և տարերայնության օրենքներին։

Սոցիալիզմը վերացնում է այդ հակասությունը։ Սոցիալիստական տրանսպորտը ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետ արագ կերպով զարգացվում է ռացիոնալ ձևով, տեղադրվում է ՍՍՌՄ-ի բոլոր տնտեսական ռայոններում։ Մեր երկրի ինդուստրացման ստալինյան հնգամյակների իրագործման հետևանքով ՍՍՌՄ-ի տրանսպորտը էապես կերպարանափոխվել է։

ՍՍՌՄ-ի երկաթուղային տրանսպորտի քանակական ցուցանիշների աճմանը զուգընթաց խոշոր չափով աճել են երկաթուղային տրանսպորտի որակական ցուցանիշները։ Արտադրամիջոցների լրիվ օգտագործմամբ, երկաթուղու լրիվ բեռնվածությամբ և բարդ աշխատանքային պրոցեսների մեխանիզացիայով ՍՍՌՄ-ի տրանսպորտն աշխարհում բռնում է առաջին տեղը։

Հետպատերազմյան հնգամյակում է՛լ ավելի են աճում ՍՍՌՄ-ի տրանսպորտի ինչպես քանակական, նույնպես և որակական ցուցանիշները։

Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ վիթխարագույն չափերով աճել են ՍՍՌՄ-ի տրանսպորտի մյուս տեսակները՝ ավտոմոբիլային տրանսպորտը, ավիացիոն, գետային, ծովային տրանսպորտը և այլն։

ՍՍՌՄ-ը վիթխարի հաջողություններ է ձեռք բերել երկրի ջրային ռեսուրսների օգտագործման ասպարեզում։ Բավական է հիշել ընկեր Ստալինի ցուցումներով կառուցված՝ սոցիալիզմի դարաշրջանի այնպիսի հրաշակերտ կոթողներ, ինչպիսիք են՝ Սպիտակ ծով—Բալթյան՝ ընկեր Ստալինի անվան հոյակապ ջրանցքը, Մոսկվա—Վոլգա ջրանցքը, Հյուսիսային ծովային ուղին և նման այլ բազմաթիվ կառուցումներ՝ ՍՍՌՄ-ի բոլոր մարզերում և ռայոններում։

Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան թեորիայի կարևորագույն մասն են կազմում ազգային ռեսպուբլիկաների արտադրողական ուժերի տեղադրման և զարգացման հարցերը։

«Մի շարք ռեսպուբլիկաներ ու ժողովուրդներ,— գրել է ընկեր Ստալինը,— որոնք չեն անցել կամ համարյա չեն անցել կապիտալիզմ, չունեն կամ համարյա չունեն իրենց պրոլետարիատը, ուստի և ետ են մնացել տնտեսական ու կուլտուրական տեսակետից, ի վիճակի չեն լիովին օգտագործելու ազգային իրավահավասարությամբ նրանց վերապահվող իրավունքներն ու հարավորությունները, ի վիճակի չեն հասնելու զարգացման ավելի բարձր աստիճանին և, այդպիսով, հասնելու առաջ անցած ազգություններին առանց դրսի

իրական ու տևական օգնության... Իսկ այդ հաղթահարել կարելի է միայն ռուսական պրոլետարիատի իրական ու տևական օգնությամբ Միության հետամնաց ժողովուրդներին նրանց տնտեսական ու կուլտուրական բարգավաճման գործում»։[1]

Ռուսական պրոլետարիատը, ռուս մեծ ժողովուրդը անշեղորեն կատարելով ընկեր Ստալինի այդ ցուցումները, անշահախնդիր կերպով տնտեսական, քաղաքական, ռազմական և կուլտուրական խոշորագույն օգնություն են ցույց տալիս ՍՍՌՄ-ի բոլոր ժողովուրդներին, որոնք անցյալում հարստահարվում էին ցարական կառավարության կողմից։

Ստալինյան հնգամյակների ընթացքում ազգային ռեսպուբլիկաների տնտեսությունն արմատապես փոխվել է, նախկին ցարական Ռուսաստանի գաղութները դարձել են առաջավոր ծաղկող ինդուստրիալ ռեսպուբլիկաներ։ Ընկեր Ստալինը ոչ միայն ազգային ռեսպուբլիկաների ինդուստրացման և արտադրողական ուժերի տեղադրման խնդիրները մշակեց, այլև ընդգծեց դրանց զարգացման ավելի արագ տեմպեր սահմանելու անհրաժեշտությունը։ Ընկեր Ստալինի այդ ցուցումը օրենք դարձավ սովետական պետության ազգային քաղաքականության համար։ Սովետական պետությունը արագ կերպով զարգացնելով ՍՍՌՄ-ի արտադրողական ուժերը, ավելի մեծ թափ հաղորդեց ազգային ռեսպուբլիկաների արտադրողական ուժերի զարգացմանը։ Այսպես, օրինակ, եթե 1940 թ. Միութենական արդյունաբերության արտադրանքն աճել է 12 անգամ՝ համեմատած 1913 թվի հետ, ապա Ղազախական ՍՍՌ-ում այդ կատարվել է 19,6 անգամ, Վրացականում՝ 26,9 անգամ, Հայկականում՝ 22,6 անգամ, Կիրգիզիայում՝ 153 անգամ, Տաջիկական ՍՍՌ-ում՝ 279 անգամ և այլն»։[2]

Ազգային ռեսպուբլիկաների ինդուստրացման համար բնորոշ են մետաղամշակման զարգացման արագ տեմպերը։ Այսպես, 1937 թվին 1913 թվի համեմատությամբ այդ ճյուղը Վրացական ՍՍՌ-ում աճել է 23.7 անգամ, Հայկական ՍՍՌ-ում՝ 55 անգամ, Թուրքմենական ՍՍՌ-ում՝ 66 անգամ, Ուզբեկական ՍՍՌ-ում՝ 54 անգամ, Ղազախական ՍՍՌ-ում՝ 83,12 անգամ և այլն։[3]

Ազգային ռեսպուբլիկաների էկոնոմիկաների զարգացման փայլուն օրինակ է Անդրկովկասը։ Մինչև սովետական կարգերի հաստատվելը, Անդրկովկասը հանդիսանում էր ցարական Ռուսաստանի գաղութը, Ռուսաստանի ագրարային կցորդը։ Անդրկովկասում եղած հարուստ հումքի աղբյուրները տեղում չէին օգտագործվում։ Հատկապես այդ վերաբերում էր տեքստիլ արդյունաբերության հումքին։ Անդրկովկասում ամեն հնարավորություն կար՝ արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերի զարգացման համար, սակայն ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը արգելակում էր Անդրկովկասի ինդուստրացմանը։

Ներկայումս Անդրկովկասի երեք եղբայրական ռեսպուբլիկաները դարձել են առաջավոր ինդուստրիալ ռեսպուբլիկաներ։

Արտադրական ուժերի տեղադրման ստալինյան ուսմունքով ղեկավար-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 209—210։

[2] Տես „Народное хозяйство СССР", изд. 1947 г., стр. 221.

[3] Տես стат. сбор. „Развитие советской экономики" изд. ВПШ при ЦКВКП(б) 1946 г., стр. 34

վելով Անդրկովկասի բոլշևիկները արմատապես փոխեցին երկրի տնտեսական պատկերը։

Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր, որոնք մինչև Անդրկովկասում սովետական կարգերի հաստատվելը գոյություն չեն ունեցել, ինչպես՝ մեքենաշինությունը և այլն։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ինդուստրացման գործին սիստեմատիկ օգնություն է ցույց տվել ռուս մեծ ժողովուրդը։ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության, նրանց տնտեսական-քաղաքական, կուլտուրական աճման գործում մեծ դեր խաղաց Անդրկովկասյան ֆեդերացիան։ Սոցիալիստական գյուղատնտեսությունը զինված է տեխնիկայի վերջին խոսքով։ Անդրկովկասում մշակվում են այնպիսի թանկարժեք տեխնիկական կուլտուրաներ, ինչպիսիր են բամբակը, թեյը, խաղողը և այլն։

Ադրբեջանական ՍՍՌ արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. գերազանցել է 1913 թ. մակարդակը 7 անգամ, ըստ որում նավթարդյունաբերությունը՝ 4,2 անգամ, էլեկտրոէներգիայի արդյունաբերությունը՝ 16 անգամ, մեքենաշինությունը՝ 31 անգամ, քիմիականը՝ 59 անգամ, տեքստիլ արդյունաբերությունը՝ 22 անգամ և այլն։[1]

Այս թվերը ցույց են տալիս, որ Ադրբեջանը ագրարային, գաղութային ծայրամասերից, որպիսին էր ցարական Ռուսաստանի պայմաններում, վեր է ածվել ինդուստրիալ ռեսպուբլիկայի։

Ադրբեջանի հետպատերազմյան հնգամյա պլանը նախատեսում է ռեսպուբլիկայի էկոնոմիկայի զարգացման ավելի բարձր մակարդակ։

Հետպատերազմյան հնգամյակում ծավալվում են Մինգաչաուրի հիդրոհանգույցի աշխատանքները, որոնց ավարտմամբ Անդրկովկասում ստեղծվում է սևեռական հացի բազա և բամբակի մշակման գործը զարգանալու է ավելի ուժեղ չափով։ Մինգաչաուրի սիստեմում ոռոգվող հողերի տարածությունը հասնելու է 1.500 հազ. հեկտարի։

Մինչպատերազմյան սահմանյան հնգամյակներում Վրաստանում կառուցվել է 800-ից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, որոնք զարգացված են տեխնիկայի վերջին խոսքով։

Արդյունաբերության հին ճյուղերը արմատապես վերակառուցվել են, ստեղծվել են արդյունաբերության նոր ճյուղեր՝ մեքենաշինություն, լեռնահանքային, նավթի արդյունահանման, նավթի վերամշակման, քիմիական, թղթի, մետաքսի, բրդի, պահածոների և մի շարք այլ ճյուղեր։

Վրաստանի արդյունաբերության մեջ 1921—1940 թ. թ. ներդրվել է 2167,5 միլ. ռուբլի, որի խոշոր մասը հատկացվել է արդյունաբերության առաջատար ճյուղերին։ Վրաստանի խոշոր արդյունաբերության արտադրանքը գերազանցել է 1913 թվի մակարդակը 26 անգամ։

Հետպատերազմյան հնգամյակում Վրաստանի ինդուստրացման աստիճանը էլ ավելի է բարձրանում։

Նոր հնգամյակում նախատեսվում է արդյունաբերության արտադրանքը 1940 թվի համեմատությամբ ավելացնել 1,5 անգամ։ Ըստ որում ծանր ին-

---

[1] Տես „Закон о пятилетнем плане восстановления и развития хозяйства Азербайджанской ССР на 1946—1950 г., изд. 1946 г.

[2] Տես Гвелесиани и Микеладзе, Сурели, „Советская Грузия", стр. 26, изд. 40., 1948 г.

դուստրիայի ճյուղերը պիտի զարգանան ավելի արագ, քարածուխի արտադրությունը՝ 3,9 անգամ, նավթինը՝ 2,4 անգամ, երկաթահատ գազգահներինը՝ 2,3 անգամ և այլն։

Վրացական ՍՍՌ հետպատերազմյան պլանում նախատեսվող արդյունաբերական խոշոր օբեկտներից է Անդրկովկասյան մետաղագործարանը, որ կառուցվում է Դաշքյասանի երկաթահանքերի վերամշակման և Տկվիբուլի ու Տկվարչելի ածխահանքերի բազայի վրա։

Այդ գործարանի կառուցմամբ կբավարարվի Անդրկովկասի ռեսպուբլիկաների աճող ժողովրդական տնտեսության պահանջները։

Վրացական ՍՍՌ գյուղատնտեսությունը, գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանքով դարձավ խոշոր մեքենայացման ենթարկված գյուղատնտեսություն։ Ստալինյան մինչ պատերազմյան հնգամյակներում Վրաստանում կազմակերպվեց 60 ՄՏԿ, որոնք սպասարկում են Վրացական ՍՍՌ դասբերի 65 տոկոսին։[1]

Վրաստանը հանդիսանում է մերձարևադարձային կուլտուրաների հիմնական բազաներից մեկը։

Վրաստանի գյուղատնտեսության մեջ զգալի տեղ են բռնում նաև տեխնիկական կուլտուրաների մշակությունը, բամբակը, ծխախոտը, խաղողը և այլն։ Հետպատերազմյան հնգամյակում Վրաստանի գյուղատնտեսությունն ավելի է զարգանում։ 1950 թվին հացահատիկի համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ աճելու է 31,5 տոկոսով, արևածաղկի սերմացուի թողարկումը 39,6 տոկոսով, շաքարի ճակնդեղինը՝ 11,4 տոկոսով, կարտոֆիլինը՝ 25,8 տոկոսով։ Ընդհանուր ցանքերի տարածությունը 1940 թ. 907 հազ. հեկտարի փոխարեն 1950 թ. կկազմի 937 հազար հեկտար։[2]

Վիթխարի նվաճումներ ունի Հայկական ՍՍՌ-ն։ Մինչ Հոկտեմբերյան ռևոլուցիան Հայաստանը հանդիսանում էր ցարական Ռուսաստանի գաղութը, հետամնաց ագրարային երկիր, չափազանց թույլ արդյունաբերական առանձին օբեկտներով։ Բացակայում էին խոշոր արդյունաբերական կենտրոնները։ Ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ գերիշխում էր գյուղատնտեսության արտադրանքը։ 1913 թվին արդյունաբերության արտադրանքը կազմում էր ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի 23,9 տոկոսը, իսկ դաշնակների արյունոտ տիրապետության օրով այդ տոկոսը իջավ մինչև 13,1 տոկոսի։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետևանքով Հայաստանի էկոնոմիկայի դեմքն ամբողջովին փոխվեց։ Հայկական ՍՍՌ-ն ագրարային երկրից վերածվեց ինդուստրիալ երկրի։ 1938 թ. Հայաստանի արդյունաբերության արտադրանքն աճեց 1913 թվի համեմատությամբ 17,9 անգամ, իսկ 1940 թվին՝ 21 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը 1913 թ. համեմատությամբ աճեց 70 անգամ։ Քսան և հինգ տարվա ընթացքում Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 3 միլիարդ ռուբլուց ավելի դումար։ 1945 թ. Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը կազմում էր ժողովրդական տնտ-

---

[1] Гвелесиани и Микеладзе. Сурели, „Советская Грузия" стр. 26, изд. 31. 1948 г

[2] Տես „Советская Грузия", էջ 75։

[3] Տես Օրենք ՀՍՍՌ ժող. տնտ. վերականգ. և զարգացման 1946—1950 թթ. հնգամյա պլանի մասին։

տեսության ողջ արտադրանքի 78,7 տոկոսը։[3] Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր՝ քիմիական արդյունաբերություն, մեքենաշինություն, տեքստիլ արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն և այլ բազմաթիվ ճյուղեր, արմատապես վերակառուցվեցին սնունդի արդյունաբերությունը, գունավոր մետաղների արդյունաբերությունը և այլն։

Արտադրողական ուժերի տեղադրումը Հայաստանում թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության ասպարեզում կատարվել է տեղական ռեսուրսների հումքի աղբյուրների մաքսիմալ և ռացիոնալ օգտագործման նշանաբանով։

Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղերը հիմնականում ապահովված են տեղական հումքով։

Հայաստանի արտադրողական ուժերի տեղադրման հոյակապ և խոշորագույն պլաններից մեկն է հանդիսանում Սևանի պրոբլեմը։

Սևանի էժան էլեկտրաէներգիայի բազայի վրա Հայաստանում, հատկապես հետպատերազմյան հնգամյակի ընթացքում, առաջացան արտադրական մի շարք նոր ճյուղեր, ինչպիսիք են էլեկտրամեքենաշինությունը, գյուղատնտեսական մեքենաշինությունը, դազգահաշինությունը և այլն։ Սևանի պրոբլեմը լուծում է Հայաստանի էներգետիկայի հարցը, ստեղծում է պայմաններ արդյունաբերության ճիշտ տեղադրման և զարգացման համար, լուծվում է ոռոգման պրոբլեմը, տրանսպորտի խնդիրները և այլն։ Սևան—Զանգու—Արաքս կասկադի կոմպլեքս օգտագործումը երկրին կտա 5 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, կկառուցվեն 8 խոշոր էլեկտրակայաններ, երեք ջրամբար, 11 ջրանցքներ և հինգ ջրոռոգման սիստեմ։ Լրացուցիչ կոռոգվի երկու հարյուր հազար հեկտար հողամաս։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ ու աջակցությամբ Հայաստանի կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեի ու կառավարության ամենօրյա օգնության շնորհիվ Սևանի կասկադի շինարարության աշխատանքները հետպատերազմյան հնգամյակում շարունակվում են մեծ թափով։

Արդեն ավարտված են Սևանի ջրընդունիչ կայանի կառուցվածքը, որը ՍՍՌՄ բարդ հիդրոտեխնիկական կառուցվածքներից մեկն է։ Այդ ջրընդունիչ կառուցվածքով ապահովվում է Քանաքեռգէսի աշխատանքը՝ լրիվ կարողությամբ և լրացվում է արդյունաբերական ձեռնարկությունների էլեկտրաէներգիայի պակասը։

Ավարտված է լճային հիդրոէլեկտրակայանի կառուցումը, որը էլեկտրաէներգիա պիտի մատակարարի ոչ միայն Երևանի ձեռնարկություններին, այլև բարձրավոլտ հաղորդման գծով կապվելու է Կիրովականի արդյունաբերական ձեռնարկությունների հետ։

Սևանի կասկադի խոշորագույն էլեկտրակայաններից է Գյումուշգէսը, որ էլ ավելի կբարելավի Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության էլեկտրաէներգիա մատակարարելու գործը։

Հայկական ՍՍՌ հետպատերազմյան հնգամյա պլանը նախատեսում է էլեկտրաէներգիայի արտադրությունը հասցնել 860 միլ. կվտ. ժամի. այդ առաջադրանքը գերազանցում է նախապատերազմյան մակարդակը մոտ 2,2 անգամ, 1913 թվի մակարդակը՝ 172 անգամ։ Այդ հսկայական պլանը կկա-

տարվի ոչ միայն նոր կառուցվող հիդրոէլեկտրակայանների հաշվին, այլև արդեն կառուցված կայանների։

Մասնագետների կարծիքով Սևանի հիդրոկայանների և նրանց հետ կապված կայանների կառուցմամբ Հայաստանի էլեկտրակայանների հզորությունը կաճի Դնեպրոգէսի համեմատությամբ 1,5 անգամով։[1]

Խոշոր են Հայաստանի գյուղատնտեսության նվաճումները։ Գյուղում կոլխոզային կարգի հաղթանակի հետևանքով ընդմիշտ վերացվեց գյուղատնտեսության հետամնացությունը, կոլխոզների համար ստեղծվեցին ունևոր կյանքով ապրելու լայն հնարավորություններ։

Ստեղծվեցին խոշոր կոլեկտիվ տնտեսություններ, սովխոզներ և ՄՏԿ-ներ, որոնց հիման վրա հնարավոր դարձավ գյուղատնտեսությունը վերազինել տեխնիկայի վերջին խոսքով։ 1949 թ. Հայաստանի ՄՏԿ-ների թիվը հասավ 42, որոնք իրենց տրամադրության տակ ունեն մեծ քանակով տրակտորներ և 200-ից ավելի կոմբայններ ու այլ բազմաթիվ գյուղատնտեսական մեքենաներ։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետևանքով բուռն թափով աճեցին բոլոր ճյուղերը, փոխվեց գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, հացահատիկային արժեքավոր կուլտուրաների ցանքատարածությունների հետ միասին, ընդարձակվեցին բազմաթիվ արժեքավոր տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները։

Զգալիորեն բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Այսպես, օրինակ՝ 1947 թվի պատկերը հետևյալն էր.

Հացահատիկային կուլտ.	1940 թ. 8,3, 1947.թ. 12,2
Կարտոֆիլ	1940 թ. 79,7, 1947 թ. 115,5
Շաքարի ճակնդեղ	1940 թ. 114,0, 1947 թ. 215,5[1]

Բամբակի գծով միջին բերքատվությունը 1949 թ. զգալի կերպով աճել է։

Ընկեր Միկոյանը 1950 թ. մարտի 10-ին Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում արտասանած իր պատմական ճառում ցույց տվեց, թե ինչպիսի խոշոր ռեզերվներ են թաքնված Սովետական Հայաստանի գյուղատնտեսության բերքատվության բարձրացման ասպարեզում, հատկապես բամբակի բերքատվության բարձրացման գործում։ Ընկեր Միկոյանը միմյանց հետ համեմատելով Արտաշատի և Էջմիածնի շրջանների կոլխոզներին, ասում է.

«Ահա՛ հնարավորություն կա կարճ ժամկետում էլ ավելի բարձրացնել բամբակի բերքատվությունը և պետությանը հանձնվող բամբակի քանակը, նկատի ունենալով այդ խնդրի լուծման առանձնահատուկ կարևորությունը։

Դա կարելի է ապացուցել հետևյալ փաստերով.

Արտաշատի շրջանի «Փարիզյան կոմունա» կոլխոզը բամբակի 22,3 ցենտներ միջին բերքատվության պայմաններում, 102 հեկտար տարածության վրա յուրաքանչյուր հեկտարից ստացել է 41 ցենտներ բերք։ Այդ կոլխոզի օղակավարուհի Սիսե Կարապետյանը 6 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացել է 74 ցենտներ, իսկ Էջմիածնի շրջանի 18-րդ Պարտհամագու-

---

[1] Տես Лебедев, „Севанская проблема".

[2] Տես Գր. Հարությունյան, Հաշվետվություն Հ(բ)Կ XIII համագումարում, էջ 43։

մարի անվան կոլխոզը ստացել է միայն 11,9 ցենտներ, թեև պայմանները հավասար են։[1]

Այնուհետև ընկ. Միկոյանը ցույց է տալիս, որ Էջմիածնի կոլխոզի հետ մնալու գլխավոր պատճառը աշխատանքի վատ կազմակերպումն է։

Հայաստանի գյուղատնտեսության զարգացման համար կարևոր և վճռական նշանակություն ունեն իրիգացիոն և մելիորատիվ աշխատանքները։

Ջրովի հողերի տարածությունը ռեսպուբլիկայում 1948 թ. կազմում էր 211 հազար հեկտար՝ 1913 թվի 97 հազար հեկտարի դիմաց։

Սևանի կասկադի շինարարության ավարտմամբ Հայաստանի ջրովի տարածություններն առնվազն կկրկնապատկվեն, կոռոգվի 200 հազարից ավելի հեկտար նոր հող։

Լուրջ հաջողություններ ձեռք են բերվել անասնապահության զարգացման ասպարեզում։ Գյուղատնտեսության այդ կարևորագույն ճյուղի վերընթաց զարգացումը պարտիան և կառավարությունը համարում են հետպատերազմյան հնգամյակի կենտրոնական պրոբլեմներից մեկը։

Հայկական ռեսպուբլիկան, իրացնելով անասնապահության զարգացման եռամյա պլանը, ձեռք է բերել զգալի հաջողություններ։

Ընկ. Հարությունյանը 1950 թ. իր ընտրողների առաջ ունեցած ելույթում հետևյալ թվերն է բերում անասունների գլխաքանակի աճի մասին, համեմատած 1940 թվի հետ։[2]

Խոշոր եղջերավոր անասունների քանակը, համեմատած 1940 թվի հետ, 1949 թ. կազմեց 124 տոկոս, կովերինը՝ 157, ոչխարներինը և այծերինը՝ 157, խոզերինը՝ 164, թռչուններինը՝ 248, մեղուներինը՝ 122։[3] Այսպիսով անասնապահության աճման քանակական ցուցանիշները հաջողությամբ են կատարվում։ Սակայն, ինչպես հայտնի է, ընկ. Միկոյանը Հայաստանի պարտիական և սովետական կազմակերպությունների առաջ խնդիր դրեց քանակական ցուցանիշներն ամրապնդել համապատասխան որակական ցուցանիշներով։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների էկոնոմիկային վերաբերող այս համառոտակի տվյալները ցույց են տալիս, թե ինչպես արտադրական ուժերի տեղադրման ստալինյան թեորիայի իրագործմամբ Անդրկովկասը ցարական կառավարության նախկին հետամնաց գաղութից վերածվել է ինդուստրիալ առաջավոր կոլխոզային երկրի։

Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան թեորիան դրվեց պարտիայի 18-րդ համագումարի որոշումների հիմքում։

Պարտիայի 18-րդ համագումարը տեղի ունեցավ այն շրջանում, երբ մեր երկիրը սոցիալիզմից կոմունիզմին անցնելու էտապն էր թևակոխում։ Ընկեր Ստալինը համագումարի առաջ խնդիր դրեց տնտեսական տեսակետից հասնել և անցնել կապիտալիստական երկրներին։

ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծումը,— սովորեցնում է ընկեր Ստալինը,— հնարավոր է արտադրողական ուժերի նոր, ավելի բարձր մակարդակի նվաճմամբ, հետևաբար արտադրողական ուժերի նոր տեղադրմամբ։ Համագումարը առաջնորդվելով ընկեր Ստալինի ցուցումներով, ա-

[1] «Սովետական Հայաստան», № 60, 1950 թ.։

[2] Նույն տեղում № 45, 1950 թ.։

[3] Նույն տեղում։

առաջադրեց. «... Այժմ մենք կարող ենք և պետք է ամբողջ հասակով, պրակտիկ կերպով դնենք և իրականացնենք ԽՍՀՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծումը, տնտեսական տեսակետից նույնպես հասնել ու առաջ անցնել Եվրոպայի առավել զարգացած կապիտալիստական երկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, վերջնականապես լուծել այդ խնդիրներն ամենամոտիկ ժամանակվա ընթացքում»։[1]

Համագումարը, ելնելով ընկեր Ստալինի գլխավոր առաջադրանքից, անհրաժեշտ համարեց ստեղծել ՍՍՌՄ-ի երկրորդ խոշոր նավթային բազան՝ «Երկրորդ Բաքուն»՝ Վոլգայի և Ուրալի միջև ընկած շրջանում։ Այդպիսի խոշորագույն հանգուցային տնտեսական պրոբլեմ էր նաև Կույբիշևի երկու խոշոր հիդրոկայանների կառուցման առաջադրանքը, որոնք հանդիսանալու էին աշխարհի մեծագույն էլեկտրոկայանները։ Համագումարի բոլոր որոշումները երրորդ հնգամյա պլանների մասին ներթափանցված էին արտադրողական ուժերի տեղադրման լենինյան-ստալինյան գաղափարներով։ Սակայն 18-րդ համագումարի պատմական որոշումներն ամբողջությամբ հնարավոր չեղավ իրագործել 1941 թ. ամառը գերմանական ավազակային իմպերիալիստների ՍՍՌՄ-ի վրա կատարված ուխտադրուժ հարձակման պատճառով։ Ընկեր Ստալինի ղեկավարությամբ պարտիան և կառավարությունը մշակեցին մեր երկրի էկոնոմիկան ռազմական էկոնոմիկայի վերածելու պլանը։

Արտադրողական ուժերի տեղադրման ստալինյան իմաստուն պլանի շնորհիվ, Սովետական կառավարությունը, օգտագործելով Արևելքի ինդուստրիան, էվակուացված ձեռնարկությունների օգտագործման հիման վրա կարճ ժամանակամիջոցում, ստեղծեց մի հզոր ռազմական էկոնոմիկա։

Օգտագործելով պլանային տնտեսության առավելությունները, կարճ ժամանակամիջոցում ժամանակավորապես թշնամու կողմից գրավված շրջաններից դեպի Արևելք էվակուացվեց 1300-ից ավելի խոշոր ձեռնարկություն, որոնք ռազմական էկոնոմիկայի ստեղծման խոշոր գործոններից մեկը հանդիսացան։

«Սովետական պետությունը այժմ ունի կարգի գցված և արագությամբ աճող ռազմական տնտեսություն»։[2]

Սոցիալիստական էկոնոմիկայի առավելությունների հետևանքով ոչ միայն ստեղծվեց ռազմական էկոնոմիկա, այլև Արևելյան շրջաններում ապահովվեց ընդլայնված վերարտադրության արագ տեմպ և Արևելքի հետագա ինդուստրացումը։

«ՍՍՌՄ Գերագույն Սովետը սահմանում է, որ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի հիմնական խնդիրներն են՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության ու գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև զգալի չափով գերազանցել այդ մակարդակը»։[3]

Ժողովրդական տնտեսության մեջ նոր հնգամյակում կատարվող կապի-

---

[1] Տես Համկ(բ)Պ 18-րդ համագումարի բանաձևերը։

[2] Ի. Վ. Ստալին. «Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին», էջ 210։

[3] Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թ.թ. հնգամյա պլանի մասին։

տալ ներդրումները գերազանցում են մինչպատերազմյան հնգամյակների կապիտալ ներդրումներին։

Հետպատերազմյան հնգամյակի արտադրողական ուժերի տեղադրումը կատարվում է ընկեր Ստալինի գլխավոր պլանի իրագործման նշանաբանով, իսկ այդ պլանի համաձայն՝ մեր երկիրն առաջիկա մի քանի հնգամյակների ընթացքում, նախապատերազմյան արդյունաբերության մակարդակը դերազանցելու է երեք անգամ։ Այդ խնդիրը լուծելու համար ընկեր Ստալինը առաջադրեց հետևյալ պլանը.

«Անհրաժեշտ է՝ մենք հասնենք այն բանին, որ մեր արդյունաբերությունը կարողանա տարեկան արտադրել մոտ 50 միլիոն տոննա չուգուն, մոտ 60 միլիոն տոննա պողպատ, մոտ 500 միլիոն տոննա ածուխ, մոտ 60 միլիոն տոննա նավթ»։[1]

Սակայն ինդուստրացման այդ բարձր մակարդակը իր հերթին առաջ է բերում ժողովրդական տնտեսության խոշոր վերելք, որ ենթադրում է արտադրողական ուժերի ընդհանուր զարգացում և համապատասխան տեղադրում։

Նոր հնգամյակում նախատեսվում էր ՍՍՌՄ արևելյան մարզերի ինդուստրացման էլ ավելի բարձր մակարդակ, ազգային մի շարք ռեսպուբլիկաներում սև մետալուրգիայի օջախների ստեղծում (Ուզբեկստան, Վրաստան և այլն)։

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես մինչպատերազմյան ստալինյան հնգամյակի և հետպատերազմյան հնգամյակների ընթացքում աճել է ՍՍՌՄ Արևելյան մարզերի ինդուստրացման տեսակարար կշիռը 1913 թ. համեմատությամբ։[2]

	Արտադրանքի տեսակը	1913	1937	1940	1950
1	Քարածուխ Դոնբասում . . .	86,8	60,5	—	35,2
	Մյուս ավազաններում	13,2	39,5	—	64,8
2	Նավթի արդյունաբ.				36
3	Չուգունի ձուլվածք			29	44
4	Պողպատի ձուլվածք			34	51
5	Գլանվածքի արտադր.			33	51

Նոր հնգամյակում նախատեսվում է Կուրսկի մագնիսական անոմալիայի արդյունաբերական օգտագործումը, որը խոշոր նշանակություն կունենա ՍՍՌՄ-ի կենտրոնական ռայոններում սեփական սև մետալուրգիական բազա ստեղծելու գործում։

Հետպատերազմյան նոր հնգամյակի խոշորագույն նշանակություն ունեցող պրոբլեմն է բնության վերափոխման ստալինյան պլանի կենսագործումը, որի նպատակն է բարձր բերքի ապահովումը ՍՍՌՄ-ի կարևոր գյուղատնտեսական ռայոններում։

Ստալինյան այդ պլանը փաստորեն հանդիսանում է ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի լուծման պլան։ Ընկեր Մոլոտովն այդ պլանի մասին գրել է.

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1946 թ. փետրվարի 9 ին. էջ 20։

[2] Տես „Развитие советской экономики", стр. 57.

«Պետական այդ հոյակապ պլանի իրագործումը, որի ընդունմամբ երաշտին ու անբերրիությանը պատերազմ է հայտարարված մեր երկրի եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային շրջաններում, մեր գյուղատնտեսությունը դուրս կբերի բարձր և կայուն բերքի իսկական ուղիղ ճանապարհ, կոլխոզների աշխատանքը կդարձնի բարձր արտադրողական և շատ բանով կբարձրացնի Սովետական Միության տնտեսական հզորությունը»։[1]

Շատ բնորոշ է, որ այդ հանճարեղ պլանի հիմնական իդեան ընկեր Ստալինը ձևակերպել է դեռևս պարտիայի 17-րդ համագումարում։

Գյուղատնտեսության ասպարեզում նոր հնգամյակի խոշորագույն պրոբլեմն է մեր անասնապահության արագ զարգացման պրոբլեմը։

Այսպիսով՝ արտադրողական ուժերի ստալինյան թեորիան հանդիսացավ մեր երկրում սոցիալիզմի կառուցման հիմնական ուղեցույցը։

Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ սովետական ժողովուրդը, կենսագործելով ընկեր Ստալինի հանճարեղ իդեաները, մեր երկրում կառուցեց սոցիալիզմ և հաղթական կերպով առաջ է շարժվում դեպի կոմունիզմ։

Г. Саакян

Товарищ Сталин о социалистическом размещении производительных сил в СССР

Резюме

Социалистический принцип размещения производительных сил является составной частью политэкономии социализма.

В. И. Ленин в своих трудах разработал общие принципы размещения производительных сил при социализме.

Товарищ Сталин, развивая эти ленинские принципы, создал стройную теорию о социалистическом размещении производительных сил.

В противоположность нерациональному и антагонистическому размещению производительных сил в странах капитализма, в Советском Союзе созданы все возможности для равномерного и рационального размещения производительных сил.

Основные идеи сталинской теории социалистического размещения производительных сил сводятся к следующему:

Индустриализация страны является основой социалистического размещения производительных сил.

Индустриализация всех экономических районов ССР является законом при социалистическом размещении производительных сил.

Размещение производительных сил осуществляется под знаменем ленинско-сталинской национальной политики. Размещение социалистической промышленности, сельского хозяйства и транспорта происходит в условиях их взаимной связи и взаимной обусловленности. Приближение хозяйственных объектов к сырьевым и энергетическим источникам яв-

[1] Վ. Մ. Մոլոտով, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 31-րդ տարեդարձը, էջ 14։

ляется одним из важнейших принципов социалистического размещения производительных сил.

Обеспечение обороноспособности нашей Родины является одним из главных задач социалистического размещения производительных сил.

Советское правительство, под руководством партии большевиков, претворяя в жизнь социалистические принципы размещения производительных сил, создало Урало-Кузнецкий металлургический комбинат, являющийся базой индустриализации Советского Востока.

Ярким примером осуществления ленинско-сталинской национальной политики в области социалистического размещения производительных сил является экономический расцвет Закавказских республик, ставших передовыми индустриальными районами Советского Союза.